# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 մայիսի 2016 թվականի N 146-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ՊՌՈՇՅԱՆԻ Պ. ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՒՄԱՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստաnի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության 2015 թվականի մարտի 3-ի N 8-Ա ակտը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լ. Նահապետյանին՝* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <Պռոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպությունից նվազեցնել ***216 800*** դրամ գումար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշլսատակազմի ղեկավար՝ *Լ. Պետրոսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի մայիսի 26
ք. Հրազդան